

4.2. Զբոսաշրջություն

4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2011թ. հունվար-հունիսին հանրապետություն են ժամանել 266155 զբոսաշրջիկներ¹, 2010թ. նույն ժամանակաշրջանի 230154 զբոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 115.6%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 274621 մարդ կամ 2010թ. հունվար-հունիսի նկատմամբ ցուցանիշի աճի տեմպը կազմել է 118.3%:

¹Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010), «զբոսաշրջիկ» է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

Ըստ նույն մեթոդաբանության, բոլոր ճանապարհորդները, ովքեր զբաղվում են զբոսաշրջությամբ, համարվում են «այցելուներ», որոնք էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ «զբոսաշրջիկներ» (գիշերող այցելուներ) և «մեկօրյա այցելուներ» (առանց գիշերելու):